

ԿԱՐԾԻՔ

Անուշ Ստեփանյանի «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը»
թեկնածուական ատենախոսության մասին

Հովհաննես Ղուկասյանի հայրենադարձությունը հետևեց նրան իր բազմաթիվ ստեղծագործություններում, իսկ հայրենիքը եղավ մշտապես ներբողվող:

Հեղինակը թե՛ մանկապատանեկան ստեղծագործությունների, թե՛ ընդհանրապես գրական գործունեության համար իր ժամանակին լավագույնս գնահատվել է:

Գրողի ստեղծագործություններին այս կամ այն չափով անդրադարձեր եղել են: Այս աշխատանքը մեկ ամբողջության մեջ է դնում նրա ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունը:

Ներածական մասում հեղինակը տալիս է աշխատանքի ընդհանուր բնութագիրը՝ այն ներկայացնելով ըստ ներքին բաժանումների՝ հինգ առանձին գլուխներ, որոնք ունեն նաև ենթաբաժանումներ: Բաժանումների այս տարբերակի ընտրության նպատակը մեկն է. ճիշտ է համարվել «այն ներկայացնել ըստ ժանրային թեմատիկայի՝ բանաստեղծության, վիպասանության, մանկագրության և այլ ժանրերում՝ առավել ընդգծելու հեղինակի բազմաժանր դրսևորումները» /տե՛ս էջ 8/:

Առանձին պարբերությամբ ներկայացվում է թեմայի մշակվածությունը, ուսումնասիրության գիտական նորույթը, որը տրվում է երկու առանձնահատկություններով՝ առաջին անգամ գրողի ամբողջ ստեղծագործությունը մեկ աշխատության մեջ, առաջին անգամ գրողի ստեղծագործության քննություն՝ ըստ ժանրերի:

Հեղինակի բանաստեղծական ժառանգությունն ամբողջական է: Նախ՝ ատենախոսը ներկայացնում է Հովհաննես Ղուկասյան բանաստեղծին՝ ըստ ամենայնի արձանագրելով, որ «բանաստեղծություններով Հովհ. Ղուկասյանը նոր խոսք չի ասել հայ քնարերգության մեջ: Նրա ստեղծագործության այդ շրջանը զուտ

նախապատրաստում էր հետագա շատ ուշագրավ արձակ գործերի երևան գալու համար» /տե՛ս էջ 12/: Այնուհետև Ա. Ստեփանյանն առանձին բանաստեղծական շարքեր է քննության առնում՝ ընտրությունը պայմանավորելով գրողի հայրենադարձ լինելու հանգամանքով: Իսկ ընդհանրապես, նա հանգամանորեն վերլուծում է այս կամ այն բանաստեղծությունը՝ իրավացիորեն շեշտելով ինչպես համեմատաբար ուժեղ, այնպես էլ թույլ տողերը՝ ասվածը հաստատելով համապատասխան մեջբերումներով:

Ակնհայտ է, որ ատենախոսն ուսումնասիրել է, կարելի է ասել, ամբողջ հայ բանաստեղծություն-գրական դաշտը մեծ հաշվով՝ քննության ընթացքում տարվող համեմատականներում առավելագույն ճշգրտության հասնելու համար:

«Հովհաննես Ղուկասյանը վիպասան» գլուխը հասկանալիորեն մեծածավալ է և չի հավասարակշռում նախորդ և հաջորդ գլուխներին. ուսումնասիրվող նյութն ինքնին հսկայածավալ է՝ ներքին բաժանվածությամբ և գործերի, այս պարագայում՝ գրողի պատմական թեմայով վեպերի, վիպակների, պատմվածքների հանգամանակից վերլուծություններով, ասվածի վկայությունների, ինչպես նաև համապատասխան գրականության ծավալուն և տեղին մեջբերումներով:

Ըստ որում, ատենախոսը հեղինակի ուշագրավ պատումների կողքին իրավացիորեն վեր է հանում գործերին բնորոշ բացը, թերին, չհաջողվածը կամ քիչ թե շատ հաջողվածը՝ մատնանշելով որոշակի հատվածներ:

Մանկագիր Հ. Ղուկասյանի ստեղծագործությունները, ըստ ատենախոսի, նախ և առաջ «նշանավորվեցին» «արտասահմանում ապրող երեխաների կյանքի պատկերմամբ» /տե՛ս էջ 103/, իսկ հեղինակի խոսքն ուղղված է հիմնականում պատանիներին: Այս շարքի վիպակները ևս վերլուծվում են հանգամանորեն՝ թե՛ կերպարային առումով, թե՛ որոշակի խնդիրներ ու գաղափարներ առաջ քաշելու կարևորությամբ:

Աշխատանքի հաջորդ մասը՝ որպես առանձին անդրադարձ հեղինակի առակի, հեքիաթի և բալլադի ժանրերին, ըստ էության, բացառապես ինքնուրույն խոսք է՝ առանց նախկինում եղած որևէ ուսումնասիրության հիմքի /բացառությամբ մեկ

անդրադարձից/։ Տրվում է այս կամ այն գործի յուրահատկությունը՝ ժամանակաշրջանի և թեմայի ընդգրկումներին վերաբերող այլ գործերի հետ համեմատությունների, վերլուծությունների միջոցով։ Ատենախոսի եզրահանգումը այս առիթով չի տարբերվում Հ. Ղուկասյանի բանաստեղծությունների մասին խոսքից. առակները ևս «ընդամենը նախապատրաստեցին շատ ուշագրավ արձակի լույս աշխարհ գալը» /տե՛ս էջ 133/։

Իսկ ահա գրողի հեքիաթները բնորոշելիս ատենախոսը նկատել է գիծը՝ այս երկու ժանրերին /հեքիաթներ և բալլադներ/ «բնորոշ առանձնահատկությունների միախառնում կա որոշ ստեղծագործություններում» /տե՛ս էջ 134/, և Ա. Ստեփանյանը տարբերակման համար հիմք է ընդունել իր՝ հեղինակի «միջամտությունը» /փակագծերում նշել է հեքիաթ կամ չի նշել/։ Հեքիաթները նույնպես ներկայացվում են այլ գրողների նույն ժանրի ստեղծագործությունների հետ համեմատության մեջ։ Ամփոփումը կատարվում է հեքիաթների և բալլադների լեզվաոճական առանձնահատկությունների վերհանումով, առանձին տեղերում նշվում են բնորոշ թերությունները՝ մտքի շփոթ առաջացնելու հանգամանքը, հանգավորման անհամապատասխանությունները և այլն։

Ատենախոսի իսկ բառերով՝ «Հ. Ղուկասյանի ստեղծագործական որոնումների վերջնակետը»՝ «Բաֆֆի» կենսագրական վիպերգությունը, քննության է առնվում աշխատանքի վերջին՝ հինգերորդ գլխում։

Այսպես, Ա. Ստեփանյանի աշխատանքում կատարվող վերլուծությունը ամբողջության մեջ կարելի է ներկայացնել հետևյալ հորիզոնական գծով. նա տարբեր մասերում ներկայացնում է գրողի ստեղծագործությունների սյուժեները առանձին-առանձին, անում համապատասխան մեջբերումներ, ներկայացնում այս կամ այն հատկանիշը՝ հետևելով համեմատություններին, տալիս եզրակացությունը։ Ցանկալի էր գնահատականները տալ՝ գործերին նայելով ընդհանրական հայեցակետով։

Աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ, անհարկի կրկնություններ, շարադասորեն ոչ ճիշտ կառույցներ։ Տեքստում մեջբերումներին վերաբերող տեխնիկական մասը բերված չէ ընդհանուր համակարգի. այն հիմնականում /չնչին բացառություններով/ կառուցված է նաև տրամաբանորեն ոչ

ճիշտ. համապատասխան հղումը կամ էջահամարը պետք է նշել տվյալ մտքի կամ նախադասության ավարտից /վերջակետից/ առաջ:

Բնականաբար, այս ամենը շտկելի է, և ցանկալի է, որ հետագայում հաշվի առնվի՝ ի շահ առկա գիտական աշխատանքի:

Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է փաստել, որ ատենախոսի կողմից արված է մեծածավալ աշխատանք՝ տեղին, ուղիղ համեմատական քննվող նյութի ընդգրկման շրջանակներին:

Անուշ Ստեփանյանն իր «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» ատենախոսության համար արժանի է հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, որի համար և միջնորդում ենք մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Կարինե Մարտիրոսյան

բանասիրական գիտությունների թեկնածու,

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի

Գյումրու մասնաճյուղի դասախոս

ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի տնօրեն՝

Վահագն Ղուկասյան

09. 11. 2020 թ.